MUSICMУЗЫКAMUSIQUEMUZIEK

Ռուզաննա Եսայան

երգեցողություն

մեթոդական ուղեցույց

7

Ռուզաննա Եսայան

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 7

Ուսուցչի ձեռնարկ

Երևան 2023

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի դասագրքերի ընդհանուր նկարագիր

Համաձայն ԿԳՄՍ նախարարության հաստատած թեմաների, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի յուրաքանչյուր դասագրքում ներառված նյութերը ներկայացրել ենք համերգաշարի՝ չորս ծրագրի ձևով: Յուրաքանչյուր թեմայի համար կազմված է մեկական համերգային ծրագիր:

Համերգների ծրագրային գրքույկների նման, մեր առաջարկած դասագրքերում ներկայացված է հակիրճ տեղեկատվություն՝ հնչող ստեղծագործությունների վերաբերյալ:

QR ծածկագրերի ներքո տեղադրված են համացանցում առկա հնարավորինս կատարողական բարձրարվեստ տեսանյութերը:

Քանի որ բարձր դասարանցիները, ըստ նոր ծրագրի, հնարավորություն չեն ունեցել ունկնդրելու ավելի ցածր դասարաններում ներկայացված որոշ ստեղծագործություններ, ուստի, որոշ նյութեր կարող են հանդիպել ինչպես հինգերորդ դասարանի, այնպես էլ յոթերորդ ու տասներորդ դասարանների QR ծածկագրերի ներքո: Այս փաստը ենթակա է վերանայման՝ ծրագրերի հետագա հստակեցման ժամանակ:

Երկրորդ դասարանի ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ առարկայի դասագիրքում հաստատված նյութերի բացատրությունները ներկայացված են մուլտֆիլմերից հատվածների օգնությամբ: Երեխաների սերը և հետաքրքրությունը մուլտֆիլմերի նկատմամբ կնպաստի նյութն ավելի հեշտ ընկալելուն:

ՀԱՐԳԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Ձեզ առաջարկվող ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ առարկայի դասագրքերի թեմաները ներկայացված են **համերգաշարի** ձևով: Այս ձևը հնարավորություն կտա երաժշտական բազմաբնույթ և բազմաժանր ստեղծագործություններն ավելի մատչելի և արագ ընկալել:

- Բոլոր թեմաների սկզբում տրված է «համերգի» ծրագիրը: Համերգային ծրագրում գլխավորը ստեղծագործությունն է: Դասագրքում առաջնային է դասաժամի սկզբում առաջարկվող ստեղծագործության տեսանյութի **ունկնդրումը**: Տվյալ դասաժամին վերաբերող բոլոր տեսանյութերն առկա են QR ծածկագրերում: Պետք է ունկնդրել հենց տրված հերթակա-նությամբ, որը համապատասխանում է թեմայի առաջին էջում նշված ծրագրին:
- Ստեղծագործության հնչելու ընթացքում (որտեղ հարմար է) կարելի է պատմել կոմպոզիտորի, կատարողի մասին, բացատրել, ցույց տալ երաժշտական գործիքները և այլն: Դրանից հետո պետք է հնչած ստեղծագործության վերաբերյալ պետք է մտքեր փոխանակել, քննարկել այն:
- Կան դասաժամեր, որոնց ընթացքում անհրաժեշտ է բացատրել երաժշտական տերմինները: Դրանց համառոտ բացատրությունները տրված են դասագրքի վերջում: Այդ բառարանից պետք է օգտվեն նաև սովորողները:
- Թեմայի ամփոփման դասաժամին ստեղծագործությունները պետք է ունկնդրել տրված հերթականությամբ, ընդմիջելով էջերին նշված հարցերով և պատասխաններով:
- Ամփոփման դասաժամին ցանկալի է, որ տեսանյութերը սկզբում միայն լսեն: Հարցերի ճիշտ պատասխանից հետո կարելի է տվյալ տեսանյութը ընդհատել:
- Այստեղ շատ կարևոր է նշել ուսուցչի տվյալ դասաժամին պատրաստ լինելը: Եթե մատուցվող նյութը նախօրոք չի մշակել դասատուն, չի «անցել» նրա զգայարաններով, համարենք, որ այդ դասաժամի 40 րոպեն կորած է: Աշակերտն ամեն դասից պետք է տանի մի նոր գիտելիք, մի նոր զգացմունք: Քանի՞ այդպիսի 40 րոպեներ են կորում ուսուցչի անտարբեր վերաբերմունքի, դասին անպատրաստ ներկայանալու պատճառով:

Այդպիսի մոտեցումը չի ներշնչում սեր ու հետաքրքրություն դասական երաժշտության հանդեպ, չի ոգևորում սովորողներին:

Դասավանդման այս ձևը մի՞ գուցե օգնի ձեզ, հարգելի ուսուցիչներ, որպեսզի սովորողներին հնարավորություն տաք զգալու երաժշտության հզոր ուժը, նրա դրական ազդեցությունը և անբաժանելի ներկայությունը նրանց կյանքում:

Այս ձեռնարկում ներկայացված է նաև «Ուսուցչի մեթոդական ուղեցույցը»:

7-րդ ԴԱՍԱՐԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

34 ժամ

շաբաթական 1 ժամ

Ժամ	Էջ	Թեմա	Ստեղծագործություններ
1	4-6	ՀԱՄԵՐԳԱՇԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ Թեմա 1 ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ	Գյովընդ Խիյո, խանե Ղափամա
2	7	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ	Բոբիկ ջուր մի էրա Վերվերի Տալ տալա
3	8	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ Աշխարհի ժողովուրդների պարեր	Հոյ նազան Լարային քառյակ Հազար ձեռքի պար
4	9	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ Աշխարհի ժողովուրդների պարեր	Ջուլո Թամզարա Մեքսիկական պար
5	10	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ Աշխարհի ժողովուրդների պարեր	Դլե յաման Իշխանաց պար Տանուրա
6	11	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ Աշխարհի ժողովուրդների պարեր	Շողեր ջան Լորկե Ռումինական պար
7	12	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ Աշխարհի ժողովուրդների պարեր	Նուբարներ Ուզունդարա Քարթուլի

			Կինտաուրի
8	13	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ Աշխարհի ժողովուրդների պարեր	Կռունկ Էջմիածին Լեզգինկա
9	14	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ Աշխարհի ժողովուրդների պարեր	Հաբրբան Փափուռի Ազիական հովհարներով պար
10	15	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ	Զարթիր լաո Քերծի Կարնո քոչարի Յորխուշտա
11	16-17	Համերգաշարի 1-ին ծրագրի ամփոփում	
12	18-19	ՀԱՄԵՐԳԱՇԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ ԳՈՒՍԱՆԱԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ	
13	20-21	ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ	Դուն էն հուրին իս Բլբուլի հիդ Քամանչա Յիս քու ղիմէթըն չիմ գիդի
14	22-23	ԱՇՈՒՂ ՋԻՎԱՆԻ	Ընկեր Ձախորդ օրերը Ես մի ծառ եմ ծիրանի Խելքի աշեցեք
15	24-25	ԳՈՒՍԱՆ ՇԵՐԱՄ	Պարտեզում վարդեր բացված Էսօր Արազն ես գնացել Սեր իմ սիրուն ես Նա մի նազ ունի
16	26-27	Համերգաշարի 2-րդ ծրագրի ամփոփում	

17	**28**	**ՀԱՄԵՐԳԱՇԱՐԻ ԵՐՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ** **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԵՐԳԱՐՎԵՍՏԸ**	**Ո՞վ կիանդիպի Խոսք՝ *Եղիշե Չարենցի*** **Աշնան մեղեդի Խոսք՝ *Վահան Տերյանի*** **Փնտրում ես դու...** **Խոսք՝ *Համո Սահյանի***
18	**29**	**Արթուր Գրիգորյան**	**Հայաստան իմ չքնաղ** **Խոսք՝ *Մարիամ Մինասյանի*** **Իմ Նոր Տարի** **Խոսք՝ *Վահան Անդրեասյանի***
19	**30**	**Ռոբերտ Ամիրխանյան**	**Երազի իմ երկիր հայրենի** **Խոսք՝ Աղասի Այվազյանի** **Հայի աչքեր** **Խոսք՝ Սարմենի**
20	**31**	**Ռուբեն Հախվերդյան**	**Սա Երևանն է** **Ձյուն**
21	**32**	**Ֆորշ**	**Ուր են** **Երևանը մենք ենք**
22	**33**	**Համերգաշարի 3-րդ ծրագրի ամփոփում**	
23	**34-37**	**ՀԱՄԵՐԳԱՇԱՐԻ ՉՈՐՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ** **(ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ)**	**Ջոակկինո Ռոսսինի** **– Նախերգանք *«Վիլհելմ Տելլ» օպերայից*** **– Ֆիգարոյի կավատինան *«Սևիլացի սափրիչը» օպերայից*** **Նիկկոլո Պագանինի** **– Կապրիս հմ. 24**
24	**38-39**	**ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**	**Վիտտորիո Մոնտի – Չարդաշ** **Անտոնիո Վիվալդի – «Տարվա եղանակները» շարքից** **– Ամառային ամպրոպ** **– Փոթորիկ**

25	**40-41**	**ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**	**Նեապոլիտանական երգեր** **– «Իմ արև» («O sole mio»)** **– «Ասացե՛ք, աղջիկներ» («Dicitencello Vuie...»)** **Ֆրանց Շուբերտ – Ավե Մարիա (Ave Maria)**
26	**42-43**	**ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**	**Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ** **– «Գիշերային փոքրիկ serենադ»** **– Սիմֆոնիա հմ. 40, 1-ին մաս** **– Ռեքվիեմ, 2-րդ մաս**
27	**44-46**	**ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**	**Լյուդվիգ վան Բեթհովեն** **– «Լուսնի» սոնատ, 1-ին մաս** **– Սիմֆոնիա հմ. 5, 1-ին մաս** **– Սիմֆոնիա հմ. 9, 4-րդ մաս**
28	**47-48**	**ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**	**Կառլ Օրֆ** **– Օ՛, ֆորտունա *«Կարմինա Բուրանա» կանտատից*** **Էդվարդ Գրիգ – «Պեր Գյունտ» սյուիտից** **– «Առավոտ»** **– «Լեռնային թագավորի քարանձավում»**
29	**49-51**	**ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**	**Յոհան Սեբաստիան Բախ** **– Տոկկատ և ֆուգա** **– Սկերցո (Կատակ) *հմ. 2 նվագախմբային սյուիտից*** **Յոզեֆ Շտրաուս – Պոլկա «Կրակի տոն»**
30	**52-53**	**ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**	**Յոհան Շտրաուս-որդի** **– «Հիասքանչ երկնագույն Դանուբի վրա»** **– Պոլկա «Տրիչ-տրաչ»** **Մորիս Ռավել – Բոլերո**

31	**54-55**	**ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**	**Յոհաննես Բրամս** **– Հունգարական պար հմ. 5** **Պյոտր Չայկովսկի** **– Փերի Դրաժեի պարը** ***«Մարդուկ-ջարդուկը» բալետից*** **– Փոքրիկ կարապների պարը *«Կարապի լիճը» բալետից***
32	**56-57**	**ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**	**Կամիլ Սեն-Սանս** **– *«Կենդանիների կառնավալ» շարքից*** **– «Ակվարիում»** **– «Կարապ»** **Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով** **– Իշամեղվի թռիչքը *«Հեքիաթ Սալթան թագավորի մասին» օպերայից*** **Յոհան Շտրաուս-հայր** **– Ռադեցկու քայլերգը**
33	**58-60**	**Համերգաշարի 4-րդ ծրագրի ամփոփում**	
34	**61**	**4 ծրագրի ամփոփում**	

Բովանդակություն

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի
դասագրքերի ընդհանուր նկարագիր.....3

ՀԱՐԳԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ 4

7-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ..... 6

Ռուզաննա Եսայան

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 7

Ուսուցչի ձեռնարկ

ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՁԱՁՈՒՌ /

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am